ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 22.02.2016թ. ԹԻՎ 109-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

10 հունիսի2016թ.,
ժամը 11:30

Մասնակցում էին.

<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>

Վ.Չիլինգարյան ՊԳՀԾ պետ

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>

Ա. Խաչատրյան ԻԾ պետ

Մ. Եսայան ՊԳՀԾ գնման համակարգող

<u>Հանձնաժողովի քարտուղար</u>

Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

<u>Օրակարգ՝</u>

1. *<<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-16>>* ծածկագրով ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.
2. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.
3. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն գնման առարկայի նախահաշվային գինը՝ 1960000 ՀՀ դրամ:

Հայտ ներկայացրած մասնակիցի տվյալները՝ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ (ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք 1, հեռ. 094444005) :

Արձանագրվեց, որ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ կողմից հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան:

Այնուհետև հանձնաժողովը սկսեց ծրարները բացելու գործընթացը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին և հրապարակեց <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ գնային առաջարկը՝ 1960000 ՀՀ դրամ:

Տեղեկացվեց նաև, <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ-ն հայտով արդեն իսկ ներկայացրել է <<ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-16>> ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1.Սույն ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մաստեր Սթայլ>> ՍՊԸ-ին:

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել << *ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/7(1)-16*>> գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը,

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 16.06.2016թ. ժամը 11.30 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Վ. Չիլինգարյան		Հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան		Հանձնաժողովի անդամ
Մ. Եսայան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար